ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 7-ից 12-ը Ճապոնիա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Ռաֆայել Գևորգյան – ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

Նաիրուհի Ավետիսյան – ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ,

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Տոկիո, 2024թ. հոկտեմբերի 7-ից 12-ը:

3. Հրավիրող կողմը.

Բանակցությունների նախաձեռնությունը եղել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Հետագայում ճապոնական կողմն առաջարկել է բանակցություններն իրականացնել Տոկիոյում՝ ս.թ. հոկտեմբերի 9-11-ին:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիր կնքելու բանակցություններ:

5. Քննարկված թեմաները.

- ՀՀ կրկնակի հարկման համաձայնագրերի մոդելային տարբերակը,
- Ճոպոնիայի կրկնակի հարկման համաձայնագրերի մոդելային տարբերակը,
- ՀՀ ներքին օրենսդրական կարգավորումներ,
- Ճապոնիայի ներքին օրենսդրական կարգավորումներ,
- ՏՀԶԿ 2017 թվականի «Կրկնակի հարկման համաձայնագրերի մոդելային տարբերակ»,
- ՄԱԿ-ի 2021 թվականի «Կրկնակի հարկման համաձայնագրերի մոդելային տարբերակ»,
- ՀՀ կրկնակի հարկման համաձայնագրերի դրույթներ,
- Ճապոնիայի կրկնակի հարկման համաձայնագրերի դրույթներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվում էին վերը նշված թեմաները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքում ամբողջապես համաձայնեցվեց «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը, որը ըստ կողմերի նախնական պայմանավորվածության առաջիկայում կստորագրվի:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաձայնագրի բոլոր դրույթների համաձայնեցման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ երկու կողմերը կփորձեն հնարավոր սեղմ ժամկետում կազմակերպել համաձայնագրի ստորագրությունը և հետագայում նաև յուրաքանչյուր կողմի կողմից համաձայնագրի վավերացումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

15/10/2024թ.

15/10/24